ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

28 դեկտեմբեր 2017, № 22. 10

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՇՊՀ» հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 4-րդ ենթակետով, «ՇՊՀ» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգի 2-րդ կետի 2.2.4 ենթակետով՝

ՇՊՀ գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Ուսանողական գիտական ընկերության կանոնադրությունը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

Հաստատված է՝
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2017թ. դեկտեմբերի 28-ի նիստում
Խորհրդի նախագահ՝ _____ Ս.Գ. Մինասյան

Ի փոփոխումն ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի
գիտական խորհրդի 26.05.2012թ.
նիստում հաստատված «ԳՊՄԻ ՊՈԱԿ-
ի ուսանողական գիտական
ընկերության» կանոնադրության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՈՒԳԸ) ՇՊՀ ուսանողներին (բակալավր, մագիստրոս, հետազոտող) կամավոր կերպով միավորող կառուցվածքային ստորաբաժանում է, որը նպաստում է ուսանողության գիտական գործունեության զարգացմանը:

1.2 ՈՒԳԸ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, ՇՊՀ-ի և սույն կանոնադրություններով:

1.3 ՈՒԳԸ-ի կանոնադրությունը և նրանում կատարվող փոփոխությունները հաստատվում են ՇՊՀ-ի գիտխորհրդի կողմից:

1.4 ՈՒԳԸ-ն ունի խորհրդանիշ և կլոր կնիք:

1.5. ՇՊՀ-ի ՈՒԳԸ-ի անվանումը. ռուսերեն՝ Студенческое Научное Общество (СНО), անգլերեն՝ Student Scientific Society (SSS):

1.6. Հասցե՝ ՀՀ, ք, Գյումրի, Պարույր Սևակի 4, փոստային ինդեքս՝ 3126, էլ. հասցե՝ sss@shsu.am

2. ՈՒԳԸ-Ի ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 ՇՊՀ-ի ՈՒԳԸ-ի նպատակն է նպաստել ուսանողական համակազմի գիտական գործունեության զարգացմանը:

2.2 **ՈՒԳԸ-ի խնդիրներն են՝**

2.2.1 գիտական ոլորտում ուսանողների ներգրավում,

2.2.2 ուսանողների գիտական գործունեության միջազգայնացում,

2.2.3 գիտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության արդյունավետության բարձրացում:

2.3 ՈՒԳԸ-ն իր նպատակներն ու խնդիրները իրականացնում է սեփական կառուցվածքային միավորների միջոցով՝ համագործակցելով գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի հետ:

2.4. **ՈՒԳԸ-ի գործառույթներն են.**

2.4.1. մշակել ուսանողների գիտական գործունեության կարճաժամկետ (2 տարի) զարգացման ռազմավարությունը,

2.4.2. կազմակերպել ուսանողական գիտաժողովներ, սեմինարներ, գիտահանրամատչելի դասախոսություններ և գիտական-կրթական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումներ,

2.4.3. հավաքագրել, կազմել և տարածել տեղեկատվություն ուսանողական գիտական միջոցառումների մասին,

2.4.4. բացահայտել գիտական գործունեությամբ զբաղվող շնորհալի և տաղանդավոր ուսանողներին,

2.4.5. համագործակցել այլ բուհերի ՈՒԳԸ-ների հետ,

2.4.6. ապահովել հանրապետական և միջազգային գիտաժողովներին ուսանողների մասնակցությունը,

2.4.7. նպաստել ուսանողների գիտական և մեթոդական աշխատանքների հրատարակմանը,

2.4.8. խրախուսել ուսանողներին գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար,

2.4.9. ընտրել և խրախուսել ուսումնական տարվա բարձր գիտական վարկանիշ ունեցող ուսանողներին:

3. ՈՒԳԸ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1. ՈՒԳԸ կառուցվածքային միավորներ են՝

- **Համալսարանի ՈՒԳԸ խորհուրդ**, որը համակարգում է համալսարանի ՈՒԳԸ գործունեությունը,
- **Ֆակուլտետի ՈՒԳԸ խորհուրդ**, որը համակարգում է համապատասխան ֆակուլտետի ուսանողների գիտական գործունեությունը,

- **Ամբիոնի ՈՒԳԸ պատասխանտու(ներ)**, ովքեր աջակցում են ուսանողների գիտական գործունեության ներգրավածությանը:

3.2. ԱՄԲԻՈՆԻ ՈՒԳԸ ՊԱՏԱՍԽԱՆՏՈՒ

3.2.1. Յուրաքանչյուր ամբիոն պրոֆսորադասախոսական կազմից ընտրում է գիտական կոչում ունեցող ամբիոնի պատասխանտու:

3.2.2. Ամբիոնի պատասխանատուն համագործակցում է ֆակուլտետի ՈՒԳԸ-ի հետ՝ ներկայացնելով առաջարկություններ ուսանողական գիտաժողովների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և գիտական-կրթական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ:

3.3. ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՈՒԳԸ ԽՈՐՀՈՒՐԴ

3.3.1 Ֆակուլտետի ՈՒԳԸ խորհուրդը ձևավորվում է ֆակուլտետի թողարկվող մասնագիտությունների բոլոր կրթական մակարդակների բարձր առաջադիմությամբ մեկական ուսանողներից (առկայության դեպքում)՝ ամբիոնների պատասխանտուների առաջարկությամբ :

3.3.2 Ֆակուլտետի ՈՒԳԸ խորհրդի անդամներից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրվում է ֆակուլտետի ՈՒԳԸ խորհրդի նախագահ և համալսարանի ՈՒԳԸ խորհրդի 3 ներկայացուցիչներ՝ յուրաքանչյուր կրթական աստիճանից 1-ական ներկայացուցիչ:

3.3.3. Ֆակուլտետի ՈՒԳԸ խորհուրդը մշակում և հաստատում է զարգացման կարճաժամկետ (2 տարի) ռազմավարական ծրագիր, որն ուղղված է ֆակուլտետի ուսանողների գիատական գործունեության զարգացմանը:

3.3.4 Ֆակուլտետի ՈՒԳԸ խորհդի նախագահը.

- ի պաշտոնե հանդիսանում է ֆակուլտետի խորհրդի անդամ
- կազմակերպում է ֆակուլտետի ՈՒԳԸ աշխատանքները,
- ներկայացնում է ֆակուլտետի ՈՒԳԸ զարգացման ռազմավարական ծրագիրը,
- ներկայացնում է ֆակուլտետի տարեկան հաշվետվությունը համալսարանի ՈՒԳԸ խորհրդում,
- նախագահը ի պաշտոնե հանդիսանում է համալսարանի ՈՒԳԸ-ի խորհրդի անդամ:

3.3.6. Ֆակուլտետի ՈՒԳԸ խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական կիսամյակում ոչ պակաս, քան երեք անգամ:

3.4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒԳԸ ԽՈՐՀՈՒՐԴ

34.1 Համալսարանի ՈՒԳԸ խորհրդի կազմի մեջ մտնում են յուրաքանչյուր ֆակուլտետի ՈՒԳԸ խորհրդի նախագահը և խորհրդից ընտրված ներկայացուցիչները:

3.4.2. Համալսարանի ՈՒԳԸ խորհրդի կազմից փակ գաղտնի քվեարկությամբ մասնակիցների թվի ձայների մեծամասնությամբ ընտրվում է նախագահ, փոխնախագահ և քարտուղար՝ 2 տարի ժամկետով:

3.4.3. ՈՒԳԸ խորհրդի նախագահ կարող է ընտրվել այն ուսանողը, ով ունի առնվազն 2 տպագրված հոդված:

4. ՈՒԳԸ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

4.1. ՇՊՀ ՈՒԳԸ խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական կիսամյակում ոչ պակաս, քան երեք անգամ:

4.2. ՇՊՀ ՈՒԳԸ խորհրդի նիստն իրավազոր է, եթե նրան մասնակցում է անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը: Որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: ՈՒԳԸ խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել գիտական քաղաքական և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտորի, ՈՒԳԸ նախագահի, ՇՊՀ ՈՒԳԸ խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:

4.3. Համալսարանի ՈՒԳԸ նորընտիր նախագահը ընտրվելուց հետո եռօրյա ժամկետում՝ մինչև գործող նախագահի լիազորությունների ավարտը, ստանձնում է պատասխանատվություն ՈՒԳԸ-ին պատկանող գույքի և կնիքի համար:

4.4. Համալսարանի ՈՒԳԸ նախագահի նոր ընտրությունները պետք է կայանան գործող նախագահի պաշտոնավարման ավարտից առնվազն յոթ աշխատանքային օր առաջ:

4.5. Համալսարանի ՈՒԳԸ խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա լիազորությունները ստանձնում է փոխնախագահը:

4.6. ՈՒԳԸ խորհրդի նախագահը

- ի պաշտոնե ներկայացնում է համալսարանի ՈՒԳԸ,
- ի պաշտոնե հանդիսանում է համալսարանի գիտական խորհրդի անդամ,
- ՇՊՀ գիտական խորհրդի հաստատման է ներկայացնում է համալսարանի ՈՒԳԸ զարգացման ռազմավարական ծրագիրը,
- ՇՊՀ գիտական խորհրդում հանդես է գալ տարեկան հաշվետվությամբ:

5. ՈՒԳԸ-Ի ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. ՈՒԳԸ միջոցները գոյանում են ՇՊՀ-ի բյուջեից կատարվող մասնահանումներից, հովանավորների կողմից կատարվող հատկացումներից, ՇՊՀ-ի կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5.2. ՈՒԳԸ-ն, համաձայն սահմանված կարգի, օգտվում է ՇՊՀ-ի տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:

5.3. ՈՒԳԸ-ի միջոցներն օգտագործվում են սեփական նպատակների և խնդիրների իրականացման համար:

6. ՈՒԳԸ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. ՈՒԳԸ –ի գործունեությունը կարող է դադարեցվել ՇՊՀ-ի գիտխորհրդի որոշմամբ:

6.2. ՈՒԳԸ-ի լուծարումից հետո նրա ամբողջ գույքը հանձնվում է ՇՊՀ-ին: